ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-640-15.10.2014-ՊԱ-010/0) վերաբերյալ:

Նախագծով նախատեսվում է նվազեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար նախատեսված վարչական տուգանքների չափերը: Մասնավորապես, նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել օրենսգրքի 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ հոդվածներում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենսգրքի նշված հոդվածներում փոփոխություններ կատարվել են 2014 թվականի հունիսի 21-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-78-Ն օրենքով: Օրենքի նախագիծը մշակվել էր Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի մարտի 27-ի 303-Ա որոշման հիման վրա ստեղծված աշխատանքային խմբի կողմից, որի նպատակն էր՝ վերանայել ճանապարհային երթևեկության կանոնների հաճախակի խախտումների համար նախատեսված տուգանքների չափերը: Աշխատանքային խմբի կողմից կատարվել են ճանապարհային երթևեկության կանոնների հաճախակի խախտումների դեպքերի, թվի, դրանց համար կիրառվող տուգանքների չափերի վիճակագրության, դրանց վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություններ: Նշված օրենքով փոփոխվել էին օրենսգրքի 124-րդ հոդվածով սահմանված տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար նախատեսված տուգանքների չափերը: Բացի դրանից՝ նոր խմբագրությամբ էր շարադրվել օրենսգրքի 124.4-րդ հոդվածը, որով սահմանվել էին տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելու համար նախատեսված տուգանքների նոր սահմանաչափեր: Արդյունքում՝ օրենքի մի շարք դրույթներով նվազեցվեցին ճանապարհային երթևեկության կանոնների հաճախակի խախտումների համար սահմանված տուգանքների չափերը՝ հաշվի առնելով վարչական տուգանքների չափերի անհամաչափությունը վարչական իրավախախտման հանրային վտանգավորության աստիճանին: Այսպես՝ նախքան «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելն առաջացնում էր տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով: Փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխա-

տավարձի չափով: Նույնը վերաբերում է նաև երթևեկության սահմանված արագությունը 11 կմ/ժ-ով և ավելի գերազանցելու դեպքերին:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ իրավակիրառական պրակտիկայում ստեղծված անհավասար պայմաններից և իրավական որոշակիության սկզբունքից ելնելով՝ օրենքով վերանայվել են տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու և սահմանված արագությունը գերազանցելու համար նախատեսված տուգանքների չափերը՝ հիմք ընդունելով վարչական իրավախախտումների հանրային վտանգավորության աստիճանը: Այդ առումով որոշ դեպքերում նվազեցվել են սահմանված տուգանքի չափերը, մյուս դեպքերում՝ ավելացվել:

Հարկ է նշել նաև, որ ճանապարհային երթևեկության կանոնների հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով 2014 թվականի օգոստոսի 26-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ընդունվել է «Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման առնչությամբ իրականացվող վարույթների կարգավորման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 803-Ա որոշումը: Աշխատանքային խումբը քննարկում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ նոր հայեցակարգային մոտեցումներ ձևավորելու հետ կապված հարցը: Մասնավորապես, քննարկվում է վարչական իրավախախտումների կանխման նոր արդյունավետ մեթոդների ներդրման հարցը՝ հիմնված երկրի առանձնահատկությունների հաշվառմամբ միջազգային լավագույն փորձի վրա:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի քննարկումից և դրան անդրադառնալ աշխատանքային խմբի կողմից մշակվող, առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք նախագծի շրջանակներում:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Հայտնում ենք նաև, որ նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծով առաջարկվում է ճանապարհատրանսպորտային երթևեկության համեմատաբար նվազ վտանգավորության աստիճան ունեցող խախտումների համար սահմանված վարչական տուգանքների չափը կիսով չափ նվազեցնել՝ համապատասխան փոփոխություններ կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124, 124.1, 124.2, 124.3, 124.4 հոդվածներում:

Հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի՝ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից գանձված վարչական իրավախախտումներից 2013 և 2014 թվականների ինն ամիսների ու 2013 թվականի տարեկան եկամուտների համամասնությունները, մեր գնահատականներով, 2014 թվականի նշված եկամուտները կկազմեն շուրջ 130.0 մլն դրամ: Մեր գնահատականներով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124, 124.1, 124.2, 124.3, 124.4 հոդվածներով սահմանված տուգանքներից գանձվելիք 2014 թվականի եկամուտները կկազմեն շուրջ 100.0 մլն դրամ:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական, որի ազդեցության չափը կկազմի առնվազն 50.0 մլն դրամ:

Միաժամանակ, հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով առաջարկվում է *նվազեցնել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար սահմանված վարչական տուգանքների չափերը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխվում են ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար սահմանված տուգանքների չափերը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն
«**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) լրամշակված տարբերակի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա, բացառությամբ Նախագծի 4-րդ և 17-րդ հոդվածներով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 135.1-րդ և 135.2 հոդվածներում կատարվող փոփոխությունների: Մասնավորապես հիշյալ փոփոխությունների ընդունումն կնպաստի այդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների թվի աճին, ինչն իր հերթին բացասական ազդեցություն կունենա առանձին կատեգորիաների՝ ուղևորների և վարորդների առողջության վրա՝ կապված ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի (ներառյալ երկրորդային) մարդու օրգանիզմի վրա ունեցած ազդեցությունից և հետևանքներից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-640-15.10.2014-ՊԱ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի, այսուհետ՝ օրենսգիրք) 124-րդ հոդվածի առաջին, երրորդ, հինգերորդ, վեցերորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմեկերորդ, տասնհինգերորդ, տասնիններորդ, քսաներորդ, քսանմեկերորդ, քսանհինգերորդ, քսանիններորդ, երեսուներորդ կետերի «հինգապատիկի» բառը փոխարինել «կրկնապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 124-րդ հոդվածի երկրորդ, տասներեքերորդ, քսաներկուերորդ, քսանչորսերորդ կետերի «տասնապատիկի» բառը փոխարինել «քառապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 124-րդ հոդվածի չորրորդ, տասնչորսերորդ, տասնյոթերորդ, քսաներեքերորդ, քսանյոթերորդ կետերի, 124.3-րդ հոդվածի առաջին կետի եւ 135.2-րդ հոդվածի երկրորդ կետի «քսանապատիկի» բառը փոխարինել «ութապատիկի» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 124-րդ հոդվածի յոթերորդ, տասներկուերորդ, տասնվեցերորդ կետերի, 124.1 հոդվածի առաջին կետի եւ 135.2-րդ հոդվածի առաջին կետի «եռապատիկի» բառը հանել:

Հոդված 5. Օրենսգրքի 124-րդ հոդվածի տասնութերորդ կետի «երեսնապատիկի» բառը փոխարինել «տասներկուապատիկի» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 124-րդ հոդվածի քսանվեցերորդ կետի «տասնհինգապատիկի» բառը փոխարինել «վեցապատիկի» բառով:

Հոդված 7. Օրենսգրքի 124-րդ հոդվածի քսանութերորդ կետի «յոթապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով:

Հոդված 8. Օրենսգրքի 124-րդ հոդվածի երեսունմեկերորդ կետի «երկուհարյուրապատիկի» բառը փոխարինել «ութսունապատիկի» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 124-րդ հոդվածի երեսուներկուերորդ կետի «երեքհարյուրապատիկի» բառը փոխարինել «հարյուրքսանապատիկի» բառով:

Հոդված 10. Օրենսգրքի 124.3-րդ հոդվածի երկրորդ կետի «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով:

Հոդված 11. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի առաջին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Երթեւեկության սահմանված արագությունը 1-20 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի 40 տոկոսի չափով»:

Հոդված 12. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի երկրորդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Երթեւեկության սահմանված արագությունը 21-40 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի 60 տոկոսի չափով»:

Հոդված 13. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի երրորդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Երթեւեկության սահմանված արագությունը 41-60 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով»:

Հոդված 14. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի չորրորդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Երթեւեկության սահմանված արագությունը 61-80 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Հոդված 15. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի հինգերորդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Երթեւեկության սահմանված արագությունը 81կմ/ժ եւ ավելի գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

Հոդված 16. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի վեցերորդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի առաջինից հինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելիս որոշում կայացնող մարմինը (պաշտոնատար անձը) արագաչափ սարքի արձանագրած ցուցանիշից պարտավոր է հանել 20 կմ/ժ՝ արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար:

Հոդված 17. Օրենսգրքի 135.1 հոդվածում «հինգապատիկի» բառը փոխարինել «կրկնապատիկի» բառով եւ «տասնապատիկի» բառը փոխարինել «քառապատիկի» բառով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով արտասահմանյան փորձը, համադրելով միջին աշխատավարձը ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար սահմանված վարչական տուգանքների չափերի հետ, ակնհայտ է դառնում, որ Հայաստանում կա մեծ անհամամասնություն: Այդպես, օրինակ, Գերմանիայում նվազագույն ամսական աշխատավարձը 11 անգամ ավելին է, քան Հայաստանում, իսկ Ռուսաստանինը գերազանցում է շուրջ 4 անգամ: Մինչ դեռ, համեմատելով նվազագույն աշխատավարձի հետ, երթեւեկության կանոնների խախտման համար սահմանված վարչական տուգանքների չափերը անհամեմատ ավելի փոքր են:

Առաջարկվող փոփոխությունների շնորհիվ միջին աշխատավարձի եւ ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար սահմանված վարչական տուգանքների չափերի միջեւ տեղ գտած անհամամասնությունները կմոտենան Ռուսականին եւ Գերմանականին: